

խորհուրդը պատկերապես ինքնուրույն հրատարակելու հետևանքով ձեր լրագրի մէջ:

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը իր պարտքն է համարում հնարակաւ լուծել յայտնել յանուն ընկերութեան. 1) այրի տիկին Մարիամ Պապովանցին, որը ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Սպիրիդոն Պապովանցի նուիրել է 2,000 ռուբլի՝ ի նպատակ Յիսկալի հայոց ծխական դպրոցի շինութեան. 2) այն 124 անձանց, որոնք նոյն նպատակով նուիրել են 271 ռ. 21 կ. Յիսկալի ձիւղի տեղական վարչութեան ձեռքով, և 3) Թիֆլիսի տոնմական պատաւոր քաղաքացի պ. Եզոր Զօհրաբեանցին և պ. Մինաս Սուլիսեանցին, որոնք գրովելով ընկերութեանս մշտական անդամ, նուիրել են իւրաքանչիւրը 300 ռուբլի:

Խորհուրդը որոշել է տալ այրի տիկին Պապովանցին, պ. Եզոր Զօհրաբեանցին և պ. Մինաս Սուլիսեանցին ընկերութեանս մշտական անդամութեան վկայագիր:

Նախագահ՝ Ա. Անանեան
Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԵՐ

Երբորում և Բիթլիսում սովը սարսափելի կերպարանք է ընդունել: «Levant Herald» լրագրի խօսքերով, 1500 հոգի՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, բառիս բուն նշանակութեամբ, մեռնում են սովից, և ապաստանվել են Գիարբէրիում, ուր տեղական իշխանութիւնները անհրաժեշտ միջոցներ են ձեռք առել՝ բնակարաններ և ապրուստի միջոցներ հայթայթելու նրանց համար:

Մեզ հաղորդում են, որ իբրեւ թէ Թիֆլիսի Գօլիանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձուհին պատգամաւ որոնելի ընտրութիւնը քանդակ է, համաձայն Գօլիանեան դպրոցի հոգաբարձուների և տեսչի բողոքի, որ առաջնորդի միջոցով ուղարկել են Եւֆրատին: Մենք հրաժարվում ենք հաւատալ այդ լուրին: Պատգամաւորները ընտրութիւնը կատարել է վեհափառ կաթողիկոսի կարգադրութեամբ հիման վրա, Ուսումնարանական Գանձաժողովի առաջարկութեամբ, որեւէ մէկ կարող է կանոնադրութեամբ ընտրութիւն քանդակել:

Ղալաբայի հրկիզեալների օգտին հաւաքած փողերի մասին «Մշակ» № 24-ի մէջ մեր առաջարկած հարցին կարող ենք աւելացնել հետեւեալը:—Ղալաբայից ստացել ենք երեք հոգու ստորագրութեամբ մի նամակ, որի մէջ ասված է, թէ «Արձագանքի» խմբագրութեան կողմից ուղարկած թղթակցից, Գանձեան անունով, որը այդ խմբագրութեան մէջ ստացված 2,000 ռուբլուց 1,000 ռ. տարել էր այդ գիւղը հրկիզեալներին բաժանելու, բաժանել է ընդամենը մօտ 400 ռուբլի միայն: Կը նշանակի, զալաբայցիների մէջ այն կարծիքը կայ, թէ ամբողջ գումարը չէ բաժանված: Այդ վերին աստիճանի անախորժ կարծիքը փարատելու փափաղը արդէն կրկնակի պարտականութիւն է դնում «Արձագանքի» վրա պարզելու այս հարցը, մանրամասն հայել տալով:

Տպագրելով «Մշակ» ներկայ համարում բժշկապետ Դան-Պարոնեանցի նամակը, մենք ուրախ կը լինէինք ըստ իրեն պահպանել այդ առիթով քանի որ յարգելի բժշկապետը շատ անշնչան և երկրորդական կէտեր է միայն չօչափում, բայց և այնպէս որ և է կասկածի առիթ չը տալու համար, ստիպված ենք կրկնել հետեւեալը: Յայտնի է, որ Եւֆրատին բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը, յանձնել տեղապահ Երեմիա արքայանի, դեռ 1893 թ. և ապրիլ ամսին, կարգադրել էր, որ ուսուցչական ժողովի գումարը յանձնվի Բարեգործական ընկերութեան: Սակայն թէ բժշկապետ Դան-Պարոնեանցը, որ առանձին կերպով չեղում է, թէ նա բարձրագոյն հոգևոր իշխանութեան հրամանը ճշգրտութեամբ կատարում է և թէ կարգադրել յանձնաժողովի անդամները ամբողջ 9 ամիս ձգձգեցին գործը և չը յանձնեցին գումարը, մինչև որ խորհուրդը ստիպվեց իր քարտուղարին զեկտեմբերին ուղարկել Եւֆրատին և ինքնուրույն վեհափառ կաթողիկոսից՝ հրամայել ի կատար ածել Տեղապահի կարգադրութիւնը: Այս կէտի մասին յարգելի բժշկապետը որ և է բացատրութիւն չէ տալիս: Գալով «անյապաղ» խօսքին, ո-

րի մասին բժշկապետը առաջ է բերում դիտարկելու հետևանքով, խորհուրդ կը տայինք կարգադրել և խորհրդին օգտված գրութիւնները, որոնցից մենք քաղել ենք մեր տեղեկութիւնները և որոնցից երեւում է, որ արգարես խորհուրդը բողոքել է 250 ռ. մասին և եղել է կարգադրութիւն «անյապաղ» յանձնելու:

«Revue d'Orient» լրագիրը հաղորդում է, որ Թէհրանում շուտով կը սկսի հրատարակվել ֆրանսերէն և պարսկերէն լեզուներով մի լրագիր: Այդ լրագիրը շաբաթը մի անգամ կը հրատարակվի:

Յօդու Պրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան անաւանք. 1) Շուշիէրից, ունի 2 ռուբլի. 2) Կողբից, Զաքար Զանգրաբեանցի՝ 7 ռ. (մնաց. բաժ.) 3) Մեղրի գիւղից, Եփրեմ Վարդանեանի միջոցով, 21 ռուբլի, հանգանակած հետեւեալ անձինքներից, վ. քահ. Տէր-Գրիգորեանց 1 ռ. Գ. Վաչեանց 1 ռ. Մ. Իսրայէլեանց 60 կ. Մ. Մէլիք-Մկրտչեանց 1 ռ. Մ. Շահեանց 1 ռ. Ա. Խաչիկեանց 1 ռ. Բ. Մարտիանց 1 ռ. Գ. Վաչեանց 1 ռ. Ա. Դանիէլեանց 60 կ. Գ. Խաչիկեանց 1 ռ. Գ. Խաչիկեանց 1 ռ. Ե. Վարդանեանց 1 ռ. Ա. Սեդ-Յովհաննիսեան 2 ռ. Հ. Հայրապետեանց 1 ռ. Խ. Շահ-Սուրբեանց 1 ռ. Գ. Տէր-Մարգարեանց 60 կ. Գ. Տէր-Զաքարեանց 1 ռ. Գ. Յովհաննիսեանց 1 ռ. Ե. Վաչեանց 1 ռ. Ունի 20 կոպ. Ուրեմն նախկին 2400 ռուբլի 16 կոպէկի հետ այժմ ունենք 2430 ռուբլի 16 կոպէկ:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց «Տիրացու Մարկոս» անունով մի գիրք, աշխատութիւն Սահրէնի Տէր-Մէլիքեանցի, որ տպված է Ալեքսանդրոպոլում: Այդ աշխատութիւնը անուանված է վէպիկ Շիրակայ կեանքից: Եթէ այդ նշանակում է թէ ներքեւ առած է իրական կեանքից և պատմած դէպքը տեղի է ունեցել, միայն հեղինակը փորձել է նրան վէպի ձև տալ, այնքան է աւելի, որ այդ փորձը անաշու է: Իբրեւ գիւղական սովորութիւնների, նախապաշարմունքների, վարք ու բարքի նկարագրութիւն, այդ աշխատութիւնը ունի փոքրիկ արժէք, բայց իբրեւ վէպ նա ոչ մի գին չունի: Գինն է 25 կ.:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ զարմանք Օդեսայում կը կայանայ ռուս-պարսկական կոնֆէրենցիա՝ ռուս-պարսկական սահմանը կանոնաւորելու նպատակով:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Երկաթուղու գիծ անցկացնելու հարցը, որ չլրակացնելիս համար երազ էր թվում, այժմ կարծես իրականանալու մօտ է: Արդէն շուրջ ամիսից ավել է, որ կանցնելու դէպքը կարաւ Ալաւերդի վաճառականները սարսափած կը լինէին, եթէ երկաթուղու գիծը ուղիղ կարաւ անցնէր՝ առանց Ալեքսանդրոպոլ հանդիպելու. դա մաս կը լինէր մեր քաղաքի համար: Բարեբաղդաբար, հաւատարմ աղբիւրներից լըսում ենք, որ Ալեքսանդրոպոլը անտես չէ առնված, և մօտ ապագայում մենք կունենանք մեր քաղաքի մէջ երկաթուղու կայարան: Մեր նոր գաւառապետը ընդունելով քաղաքի պատուաւոր անձանց՝ բոլորի ներկայութեամբ աւետեց այն ուրախակի լուրը, թէ Ալեքսանդրոպոլը շուտով կունենայ երկաթուղու գիծ: Մեր միակ ցանկութիւնն է, որ շուտով իրականանայ այդ ուրախակի լուրը:

ԱՍՏԻՍԱՆԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 20-ին առաջին անգամ Աստրախանում տեղի ունեցաւ հայկական երկու ուղի, որը անցաւ անսպասելի աջողութեամբ, յոգևաւ տեղի բացակի հայոց զորադրանին: Երեկոյթը կազմող երկուստեայրները չէին խնայել ոչ մի ջանք երեկոյթի համար. մի առանձին սենեակ դարձրված էր ասիական թանգարանի շարքով, գորգերով և թախտերով, որտեղ պատից կախված էր վեհափառ կաթողիկոսի պատկերը, իսկ աջ և ձախ պատերից՝ Գրիգոր Արծրունու և Բաֆֆի պատկերները: Արդէն ժամը 9-ին Աստրախանի ինտելիգենտ երկու սեռի հայ հասարակութիւնը լցրել էր դահլիճը և կողմնակի սենեակները: Պարբերից յետոյ տեղի ունեցաւ ընթերցում, որը մինչև առաւելու Նրբ ընթերցում սկսվեց, հա-

սարակութիւնը բաժանելու առաջարկեց վեհափառի կենացը և ապա Գրիգոր Արծրունու, Բաֆֆի և Պատկանեանի յիշատակին. ապա իր հաւատարմութիւնը յանձնեցաւ առաջ՝ չէ կարող նա դեպքան ճանաչվել:

«Մենք հաստատ աղբիւրից լսեցինք, որ սըր Ֆիլիպը շատ բարեկամական ընտելութիւն ունեցող յանձնարարութիւն ունի. նա ամեն ջանք գործ կը դնի համոզելու սուլթանին, թէ իրանք համաձայն են շահեր ունենալ, շահեր, որոնք կապում են Թիւրքիան Անգլիայի հետ և որոնք ամենալաւ գործակալն են Օսմանեան կայսրութեան յաւատարմութեան համար:

ՎԱԿԻԿԱՎԱՍԳՅԱՆ մեզ գրում են. «Փետրվարի 24-ին, Վարդանանց տօնի օրը, պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ, օրիորդաց ուսումնարանում մեծ հանդէսով կատարվեց Վարդանանց տօնը: Այդ օրը ժողովրդի մեծ բազմութիւն էր եկել ուսումնարան, թէ մանուկների առաջադիմութեան և թէ Վարդանանց տօնին հանդէսատես լինելու, բայց ուսումնարանում յարմար դահլիճ չը լինելու պատճառով ժողովուրդը մեծ ներդրութիւն էր կրում ի յիշատակ Վարդանանց նահատակների հոգեհանգիստ կատարելուց յետոյ, առաջ ուսուցիչը բացատրեց Վարդանանց տօնի նշանակութիւնը: Ապա յառաջ բերեց ուսումնարանի շինութեան խնդիրը ասելով, որ ամօթ է Վարդիկավազի պէս հասարակութեան համար սեփական ուսումնարան չունենալը: Վերջում առաջ ուսուցիչը կարգաց տարեկան տեղեկագիրը, բաժանեց անցեալ 1893 թ. աւարտած աշակերտներին և աշակերտուհիներին աւարտման վկայագրերը գովասանական թերթերի հետ, իսկ միւս աշակերտներին և աշակերտուհիներին կիսամնայ թւանշանները: Կարգացին մի քանի օտանաւորներ Պատկանեանի բանաստեղծութիւններին, և երգեցին մի քանի աղբյւրներ երգեր: Ժողովուրդը հեռացաւ ուրախ տրամադրութեան տակ և շորհակալութիւն յայտնեց ուսուցչական խումբին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՐԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Երբորում մեր հետեւեալ տեղեկութիւնները.

«Երբորում աղբաւորութիւն օր ըստ օրէ կաւելանայ: Հացի գինը հասել է առաւելական թւին: Լիտրը 17 դրուշ (մեր հաշուով պոլը 3 ռ. 40 կ.) ալիւր չուկանեւ մէջ չի ծախուի: Հանապարհները գոց են: Հանապարհներ լի են առաւելական խմբերով: Քրդերի հրոսակները օր ցերեկով կը կողոպտեն ժողովրդին: Պօսան անգամ յափշտակութեան կենթարկվի աւաղակներէն:

«Մուշէն եկած նամակներ շատ ախուր կը նկարագրեն տեղոյն հայոց վիճակը. քըր-դեր կը կեղեքեն ժողովուրդը: Յունվարի 18-ին Մշոյ գաւառի Պաշ-Չիֆթլիք գիւղի մէջ քըր-դեր Համիդիէ զօրքի հազուատով կը մտնէ տեղւոյն ու էս Պետրոսի տուն՝ պահանջելով ալիւր: Խեղճ ունի կը խոտովանի, որ աւելորդ ալիւր չունի և ունեցածը հազիւ բաւականացնէ իր ընտանեաց: Հրոսակները կատաղաբար կը սկսեն վիճել ու կռուի: Կռու միջոցին կը սպանն ունի օրդոյն Յովհաննէսին և եղբոր ալիւր բարձած կը գանա Տեղական զօրքը թէ և հետամուտ եղաւ անապակներուն, բայց չը կարողացաւ ոչինչ չինել: Գաղթականների թիւ աճելով կաճէ:

ԹԻՒՐԿԻԱ

Մայրաքաղաքի «НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթակցից փետրվարի 18-ից (մարտի 2) գրում է հետեւեալը.

«Անգլիական նոր դեսպանը հասաւ Կ. Պոլսի փետրվարի 10-ին (նոր տօնարով), բայց մինչև այժմ դեռ ևս չարժանացաւ սուլթանի ունկնդրութեանը: Ունկնդրութիւնը առաջ նշանակված էր հինգշաբթի, փետրվարի 2-ին, բայց մինչև չաբաթ յետաձգեցին: Շաբաթ օրվանից ընդունելութիւնը կրկին յետաձգեցին մինչև երկուշաբթի, փետրվարի 14-ին (26), բայց նախընթաց օրը տեղեկացրին դեսպանին, որ սուլթանը չէ կարող նրան ընդունել: Պայտուս խօսում են, որ ունկնդրութիւնը երկուշաբթից վաղ (մարտի 5-ին) տեղի ունենալ չէ կարող: Այդպիսով, անգլիական դեսպան սըր Ֆիլիպպի գալուց երկու շաբաթ կանցնի, մինչև որ նա կընդունվի սուլթանի մօտ: Ասում են, որ անգլիական դեսպանը շատ դժգոհ է այդ բանից, և որպէս բողոք, երէկ ընդունեց

Կ. Պոլսի անգլիական կօնսլան, մի վարմունք, որ ձևականութեան տեսակէտից անկասկած է, որովհետև սուլթանի մօտ ընդունվելուց և նրան իր հաւատարմութիւնը յանձնելուց առաջ՝ չէ կարող նա դեսպան ճանաչվել:

«Մենք հաստատ աղբիւրից լսեցինք, որ սըր Ֆիլիպը շատ բարեկամական ընտելութիւն ունեցող յանձնարարութիւն ունի. նա ամեն ջանք գործ կը դնի համոզելու սուլթանին, թէ իրանք համաձայն են շահեր ունենալ, շահեր, որոնք կապում են Թիւրքիան Անգլիայի հետ և որոնք ամենալաւ գործակալն են Օսմանեան կայսրութեան յաւատարմութեան համար:

«Պարիզի առողջապահական կոնֆէրենցիայի թիւրքաց գլխաւոր ներկայացուցիչները սաստիկ դիմադրութիւն են ցոյց տալիս եւրոպական մնացած պետութիւնների լիազօրեւորին և չեն ընդունում կոնֆէրենցիայի մէջ մշակած այն միջոցները, որոնց նպատակն է պաշտպանել թիւրքաց կայսրութիւնը խօնրայից: Սուլթանը չէ ցանկանում, որ կոնֆէրենցիան միջամտէ իր կայսրութեան ներքին գործերում, մասնաւորը Գէշտում, ուր անհրաժեշտ է պահպանել նրան իր պրէտորի մահմեդական ուխտաւորների աշտում:

ՆԱՍՏԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թարիզի փետրվարի 16-ին
Յունվարի 30-ին ընթերցարանական դահլիճում կայացաւ «Արամեան ընթերցարանական ընկերութեան» ընդհանուր ժողովը, նախագահութեամբ մեր թիւի առաջնորդը: Այնպէս տարվա հաշիւը կարգաւորեց յետոյ, կարդացվեց նոր խմբագրած կանոնադրութիւնը: Դրանից յետոյ ձայների առաւելութեամբ ընտրվեցին վեց հոգի՝ առաջնակայ երեք տարին ընթերցարանը կառավարելու համար: Այդ վեց հոգին իրանց մէջ պէտք է ընտրեն մի տեսուչ, մի քարտուղար և մի գանձապահ:

Պէտք է նկատել, որ թէ և մի առանձին առաւելագիրութիւն չէ արել մեր ընթերցարանը, բայց դարձեալ անցեալ տարիների հետ համամատեղվելով վիճակի մէջ է, ոչ-տեղացի մի քանի պարսկերէնի չորհով:

Նոյն ժողովում տեղի ունեցաւ մի վերին աստիճանի հակալիւրի դէպք: Այդ դէպքը մեզ յիշեցնում է բողոքական քարոզիչների սովորութիւնը: Այդ քարոզիչները միշտ աշխատում են իրանց անդամների թիւը շատացնել, և եթէ մի քանի հոգի, լոկ հետաքրքրութեան համար, դնում են ժողովարան, իսկոյն այդպիսիների անունները արձանագրում են և Ամբիկա տեղեկութիւն են տալիս, որպէս զի այնտեղից անդամների թիւի համաձայն դրամ ուղարկեն ծախսելու համար: Նրանք, ի հարկէ, այդ դրամները իրանց գրպանն են դնում և երբեք գործի վրա չեն ծախում: Առանց միտնելու այդ անախորժ դէպքի աւելի անհանդու մանրամասնութիւնների մէջ, այսքանը միայն հարկ ենք համարում յիշեցնել ժողովի նախագահին, որ Թարիզում ոչ թէ 32 տուն հայեր կան, այլ 700 տուն, այնպէս որ Թարիզի հասարակութեան նունից մի քայլ անելու համար պէտք է այդ հասարակութեան համաձայնութիւնն ունենալ: Ապա թէ ոչ դուրս կը գայ բողոքական քարոզիչների խաբուսիկ վարմունքը: Ով ականջ ունի լսելու՝ թող լսէ:

Փետրվարի 10-ին տեղի ունեցաւ «Կանանց ընկերութեան» նիստը, որտեղ պարզվեց, որ ընկերութիւնը մօտ 1,000 ռ. դրամագում ունի և տարվայ միջոցով 30 չքաւոր օրիորդների համար թէ չոր և թէ դասական պիտոյքներ է հոգացել: Ընկերութեան ունի մի արհեստանոց, ուր ձրիաբար սովորում են 10 չքաւոր աղջիկներ, և բացի դրանից ունի այնպիսի յաճախողներ, որոնք ամիսը 5 դրամ են տալիս յօդուա ընկերութեան: Միւս տարվանից այս արհեստանոցում գորդ գործելն էլ պէտք է սովորեցնեն: Կոտարեալ աշտութիւն ենք ցանկանում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԿԵՐ

—Սիդիլիայում կրկին լսվում են «մենք սովից մեռնում ենք» աղաղակները: Կղզու շատ տեղերում, — իտալական լրագիրների խօսքերով, — խիստ ձմեռվայ և ձիւնի պատճառով, գիւղացիները հացի մեծ կարօտութիւն ունեն: Աշտիկի և Մասկալուչիայի քաղաքային վարչութիւնները արդէն սկսել են հաց բաժանել: Թշուառութիւնը շատ մեծ է Ամբոյլ ընտանիքներ չունեն ոչ տուն և ոչ տաք

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кан.